

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Գործողությունների ծրագիր
2014-2016թթ.

Հաստատված՝
2013թ. դեկտեմբերի 6-ին կայացած ՀՀ վարչապետին
կից Արդյունաբերական խորհրդի նիստին

Սույն Գործողությունների ծրագիրը բխում է ՀՀ կառավարության N 49 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունից և թեթև արդյունաբերության ոլորտի (տեքստիլ և տրիկոտաժի ոլորտ, կաշվի, կոշիկի և կաշվե իրերի արտադրություն): Ներկայացված գործողությունների ծրագիրը սահմանում է թեթև արդյունաբերության ոլորտի ռազմավարության իրականացման ծրագիր 2014-2016թթ. Ժամանակահատվածում:

Գործողությունների ծրագիրը ներկայացված է 3 մակարդակով՝ ռազմավարական ուղղությունների, ռազմավարական նախաձեռնությունների և գործողությունների: Գործողությունները խմբավորված են ըստ ռազմավարական նախաձեռնությունների, վերջիններս իրենց հերթին պատկանում են սահմանված ռազմավարական ուղղություններից մեկին:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում ռազմավարական ուղղություններն են՝

1. Հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման խնդիրների հասցեագրում
2. Տեղական հումքային բազայի զարգացում
3. Մասնագիտական կրթության բարելավում և աշխատուժի պատրաստում և վերապատրաստում
4. Ֆինանսական աջակցություն
5. Օտարերկրյա արտապատվիրման ներգրավում
6. Սեփական արտադրանքի արտահանման խթանում
7. Հայկական բրենդերի զարգացում
8. Ներքին շուկայում տեղական արտադրանքի վաճառքների խթանում
9. Որակի ապահովում և վերահսկում

1. Սույն գործողությունների ծրագիրն ընդհանուր է տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի և կաշվի, կոշիկի և կաշվե իրերի արտադրության ոլորտի զարգացման ռազմավարությունների համար: Սա պայմանավորված է մի շարք ընդհանրություններով ոլորտների արժեչոթայի տարբեր հատվածների, առաջնդման և զարգացման տեսլականի միջև: Գործողությունների ծրագրի շրջանակում առանձին ոլորտների համար մի շարք գործողություններ կիրականացվեն համատեղ: Վերոնշյալով պայմանավորված՝ տեքստիլ և տրիկոտաժի, կաշվի և կոշիկի արտադրության ոլորտների համար նախատեսվում է մեկ ընդհանուր ոլորտային խորհրդի ստեղծում: Այն գործողությունները, որոնց դեպքում հասցեագրման ոլորտը առանձին նշված չէ, վերաբերում է սույն ռազմավարության թիրախ բոլոր ոլորտներին:
2. Սույն Գործողությունների ծրագրում պետության կողմից համաֆինանսավորվող գործողությունների իրականացման նախապայման է մասնավոր հատվածի ֆինանսավորումը:
3. Այն նախաձեռնությունների համար, որոնք ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակում ընդհանրական են նաև թիրախային մյուս ոլորտների համար, սույն ռազմավարությամբ առանձին գործողություններ չեն առաջարկվում:
4. Գործողությունների ծրագրի բյուջեի ցուցանիշները արտացոլում են ծախսերի նախնական գնահատականները: Յուրաքանչյուր գործողության ծախսը ենթակա է ճշգրտման յուրաքանչյուր տարվա համար տարեկան ծրագրի կազմման ժամանակ:
5. Ընթացիկ տարվա վերջում ոլորտային խորհուրդը վերանայում և հաստատում է Գործողությունների ծրագիրը (գործողությունները՝ համապատասխան ժամկետներով և բյուջեով) հաջորդ տարվա համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՌԻԴՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՌԻ)

ՌՌԻ 1. ՀՈՒՄՔԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՍՈՒԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄ

ՌՌԻ 2. ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԲԱԶԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ՌՌԻ 3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒՄԻ ԹՅՈՒՆՆԵՐ (ՌՆՆ)

1.1. Հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների բարելավում

Կաշվի և կոշիկի արտադրության ոլորտ
2.1. Կաշվի տեղական հումքային բազայի զարգացում

3.1. Ոլորտի կրթության կարիքների և աշխատուժի պահանջարկի գնահատում
3.2. Արտադրական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների և որակի վերահսկման մասնագետների պատրաստում/վերապատրաստում
3.3. Մասնավոր հատվածի և նախնական և միջին մասնագիտական հաստատությունների միջև համագործակցության խթանում
Կաշվի և կոշիկի արտադրության ոլորտ
3.4. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կոշիկի արտադրության կրթական ծրագրի ներդրում
3.5. Կոշիկի մոդելավորման համակարգչային դիզայնի մասնագիտական ուսումնական կենտրոնի ստեղծում

ՈՍԱԶՆԱԿԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԹՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՌՈՒ)

ՌՈՒ 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒ 5 ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐՏԱՊԱՏՎԻՐՄԱՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

ՌՈՒ 6. ՄԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

ՈՍԱԶՆԱԿԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՃԵՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՌՆ)

4.1. Կապիտալ ներդրումային ծրագրերի վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորում և շրջանառու միջոցների վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորում*

**Շնորհանրական նախաձեռնություն թիրախային բոլոր ոլորտների համար:*

5.1. Շնորհանդեսների կազմակերպում Իտալիայում և Գերմանիայում՝ նոր ընկերությունների ներգրավման նպատակով

5.2. Հայաստանում արտապատվիրման հնարավորություններով հետաքրքրված արտերկրյա ընկերությունների ներգնա այցելությունների կազմակերպում

6.1. Ռուսաստանում հայկական արտադրանքի արտահանման աջակցման կառույցի ձևավորում

6.2. Թիրախային շուկաներում (մասնավորապես, Ռուսաստանում) ցուցահանդեսներին մասնակցություն

6.3. Թիրախային շուկաներում հայկական արտադրանքի սերտիֆիկացման ծախսերի համաֆինանսավորում

6.4. Թիրախային շուկաների վերաբերյալ մարքեթինգային տեղեկատվության տրամադրում հայկական ընկերություններին

ՈՍԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՂԱԹՅՎԱԿԱՆՆԵՐ (ՈՒՆ)

ՈՍԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՈՆ)

ՈՒՌԻ 7. ՀԱՅԿԱԿԱՆ ԲՐԵՆԴԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՈՒՌԻ 8. ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՑՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

ՈՒՌԻ 9. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՈՒՄ

- 7.1. Հագուստի և կոշիկի առաջատար դիզայներական դպրոցների կրթական ծրագրերի ներդնում Հայաստանում
- 7.2. Հայաստանում հագուստի և կոշիկի դիզայնի կրթության բարելավման ծրագրի մշակում
- 7.3. Հայաստանում նորաձևության ցուցադրությունների կազմակերպում և մասնակցություն արտերկրում կազմակերպվող նորաձևության ցուցահանդեսներին

- 8.1. Տեղական շուկայում պատրաստի արտադրանք ներմուծողների կողմից հնարավոր անբարեխիղճ մրցակցության հասցեագրման մեխանիզմի ստեղծում
- 8.2. Տեղական արտադրանքի առաջնություն համացանցում
- 8.3. Ներքին շուկայում սպառողների շրջանում տեղական արտադրանքի վերաբերյալ իրազեկության բարձրացում

- 9.1. Ոլորտում գործածվող հումքի և վերջնական արտադրանքի որակի սերտիֆիկացման լաբորատորիայի հիմնման անհրաժեշտության գնահատում

ՈՒՈՒ 1.

ՀՈՒՄՔԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌԻ 1.1. Հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների բարելավում

Ակնկալվող արդյունք

Օրենսդրական փոփոխություններ հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների վերաբերյալ, որոնք կնպաստեն տեղական արտադրողների շրջանառու կապիտալի բարելավմանը

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>1.1.1. Հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների վերանայում.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային խմբի ստեղծում - Քննարկումների անցկացում շահագրգիռ կողմերի հետ՝ խնդրահարույց հարցերը* բացահայտելու նպատակով - Խնդիրների ուսումնասիրություն և դրանց հասցեագրման անհրաժեշտ քայլերի նույնականացում - Եզրակացությունների ներկայացում ոլորտային և արդյունաբերական խորհուրդներ - Համապատասխան օրենսդրական փոփոխության նախագծերի մշակում (առկա անհրաժեշտության պարագայում) - Օրենսդրական փոփոխությունների նախագծի փաթեթի ներկայացում ՀՀ կառավարություն <p>Նշումներ</p> <p>*Թեթև արդյունաբերության ոլորտի ռազմավարության մշակման ընթացքում բացահայտված խնդիրները մասնավորապես հետևյալ ուղղությամբ են (խնդիրները կվերջնականացվեն աշխատանքային խմբի կատարած ուսումնասիրության ընթացքում).</p> <ul style="list-style-type: none"> - Հումքի ներմուծման դեպքում սահմանի վրա ԱԱՀ վճարում** - Ներմուծված հումքի մաքսային ձևակերպման ժամանակ կիրառվող հսկիչ գների մեխանիզմ - Արտադրական նմուշների մաքսային ձևակերպում** - Ներմուծված հումքի և սարքավորումների սերտիֆիկացման պահանջներ - Ներմուծված սարքավորումների վրա ԱԱՀ-ի կիրառում** <p>** Սույն խնդիրը ՀՀ Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակում ընդհանրական է նաև թիրախային մյուս ոլորտների համար:</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ ԿԱ ՊԵԿ</p> <p>ՉՀԳ</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p> <p>Կաշի վերամշակող ընկերություններ</p>	<p>-</p>	<p>Աշխատանքային խմբի ստեղծում - վերջնաժամկետ՝ 2014թ. փետրվար</p> <p>Ուսումնասիրության եզրակացությունների ներկայացում ոլորտային խորհուրդ - վերջնաժամկետ՝ 2014թ. մայիս</p> <p>Եզրակացությունների ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ – վերջնաժամկետ՝ 2014թ. հունիս</p> <p>Օրենսդրական փոփոխությունների նախագծի փաթեթի ներկայացում ՀՀ կառավարություն (առկա անհրաժեշտության պարագայում) - վերջնաժամկետ՝ 2014թ. սեպտեմբեր</p>	<p>Ոլորտային և արդյունաբերական խորհուրդներ ներկայացված եզրակացություններ հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների վերանայման վերաբերյալ</p> <p>ՀՀ կառավարություն օրենսդրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ ներկայացված փաթեթ</p>

ՌՈՒ 2.

ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԲԱԶԱՅԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 2.1. Կաշվի տեղական հումքային բազայի զարգացում

Կաշվի հումքի վերամշակման ծավալների աճ, որը մատչելի հումք կապահովի տեղական կոշիկ արտադրողներին

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>2.1.1. Խոշոր և մանր եղջերավոր կենդանիների չվերամշակված կաշվի արտահանման սահմանափակման մեխանիզմների կիրառման հնարավորությունների ուսումնասիրություն և օրենսդրական փոփոխությունների առաջարկության ներկայացում.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային խմբի ստեղծում - Քննարկումների անցկացում շահագրգիռ կողմերի հետ - Հնարավոր մեխանիզմների նույնականացում* - Եզրակացությունների ներկայացում ոլորտային և արդյունաբերական խորհուրդներ - Համապատասխան օրենսդրական փոփոխության նախագծերի մշակում (առկա անհրաժեշտության պարագայում) - Օրենսդրական փոփոխությունների նախագծի փաթեթի ներկայացում ՀՀ կառավարություն (առկա անհրաժեշտության պարագայում) <p>Նշումներ</p> <p>*Օրինակ՝ արտահանման վրա քվոտայի կամ պետական տուրքի կիրառում:</p> <p>Աշխատանքները կիրականացվեն 1.1.1 կետով նախատեսված աշխատանքային խմբի կողմից:</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ ԿԱ ՊԵԿ</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ՋՀԳ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p> <p>Կաշի վերամշակող ընկերություններ</p>	<p>-</p>	<p>Աշխատանքային խմբի ստեղծում - վերջնաժամկետ՝ 2014թ. փետրվար</p> <p>Ուսումնասիրության եզրակացությունների ներկայացում ոլորտային խորհուրդ - վերջնաժամկետ՝ 2014թ. մայիս</p> <p>Եզրակացությունների ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ – վերջնաժամկետ՝ 2014թ. հունիս</p> <p>Օրենսդրական փոփոխությունների նախագծի փաթեթի ներկայացում ՀՀ կառավարություն (առկա անհրաժեշտության պարագայում) - վերջնաժամկետ՝ 2014թ. սեպտեմբեր</p>	<p>Ոլորտային և արդյունաբերական խորհուրդներ ներկայացված եզրակացություններ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների չվերամշակված կաշվի արտահանման սահմանափակման անհրաժեշտության և հնարավորությունների վերաբերյալ</p> <p>ՀՀ կառավարություն օրենսդրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ ներկայացված փաթեթ (առկա անհրաժեշտության պարագայում)</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 2.1. Կաշվի տեղական հումքային բազայի զարգացում

Կաշվի հումքի վերամշակման ծավալների աճ, որը մատչելի հումք կապահովի տեղական կոշիկ արտադրողներին

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>2.1.2 Կաշվի հումքի որակի բարելավում՝ սպանդանոցային մորթի կիրառման և կենդանիների մաշկային հիվանդությունների դեմ պայքարի միջոցով.</p> <ul style="list-style-type: none"> - Սպանդանոցային մորթի պարտադիր պահանջի կիրառման ժամանակացույցի և գործողությունների ծրագրի մշակում - Գյուղատնտեսության աջակցման ծրագրերի շրջանակում խոշոր եղջերավոր կենդանիների մաշկային հիվանդությունների դեմ միջոցառումների մշակում 	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p> <p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ԶՀԳ</p> <p>Կաշի վերամշակող ընկերություններ</p> <p>Գյուղատնտեսության աջակցման կառույցներ (մասնավորապես «CARD»-ի ֆերմերային և անասնաբուժական կենտրոններ)</p>	<p>-</p>	<p>2014թ. մայիս</p>	<p>Սպանդանոցային մորթի պահանջի կիրառման ծրագիր</p> <p>Մաշկային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների ծրագիր</p>

ՌՈՒ 3.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 3.1. Ոլորտի կրթության կարիքների և աշխատուժի պահանջարկի գնահատում

Ոլորտում մասնագիտական կրթության որակի և պահանջարկված աշխատուժի նախադրյալների ապահովում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ընթացիկ արդյունք
<p>3.1.1. Ոլորտի կրթության կարիքների և աշխատուժի պահանջարկի գնահատում.</p> <ul style="list-style-type: none"> - Հարցումների և քննարկումների անցկացում շահագրգիռ կողմերի հետ՝ մասնավոր հատվածի ընկերություններ, նախնական և միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ - Հասցեագրման անհրաժեշտ քայլերի, այդ թվում կրթական և աշխատողների վերապատրաստման ծրագրերի նույնականացում - Եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում ոլորտային խորհուրդ 	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>Դոնոր կազմակերպություններ</p>	<p>-</p>	<p>Ուսումնասիրության եզրակացությունների ներկայացում ոլորտային խորհուրդ - ամենամյա գործողություն, տարվա վերջին եռամսյակ* (հաջորդող տարվա համար)</p>	<p>Ոլորտային խորհուրդ ներկայացված եզրակացություններ ոլորտի կրթության կարիքների և աշխատուժի պահանջարկի վերաբերյալ</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 3.2. Արտադրական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների և որակի վերահսկման մասնագետների պատրաստում/վերապատրաստում

Ոլորտի աշխատուժի արտադրողականության բարձրացում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ընթացիկ արդյունք
<p>3.2.1. Արտադրական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների և որակի վերահսկման մասնագետների պատրաստման և վերապատրաստման ծախսերի համաֆինանսավորում՝ հիմնվելով կարիքների բացահայտման ուսումնասիրության արդյունքների վրա.</p> <p>Նշումներ</p> <ul style="list-style-type: none"> Մույն Գործողությունների ծրագրի շրջանակում մոտարկված է, որ 2014թ.-ին կարող են վերապատրաստվել շուրջ 150 մարդ (արտադրական աշխատուժ), որը 2015-2016թթ. կարող է աճել՝ կազմելով շուրջ 350 մարդ: Մույն Գործողությունների ծրագրի շրջանակում մոտարկված է, որ 2014թ.-ին կարող են վերապատրաստվել արտադրության 3 կազմակերպիչ/որակի վերահսկման մասնագետներ, որը 2015-2016թթ. կարող է աճել՝ կազմելով 6: Աշխատուժի վերոնշյալ քանակը նախնական մոտարկում է, որն ամեն տարի նախատեսվող ոլորտի կրթության կարիքների և աշխատուժի պահանջարկի գնահատման ուսումնասիրության արդյունքում կհստակեցվի հաջորդող տարվա համար: Կարող են սահմանվել քվոտաներ յուրաքանչյուր ընկերության համար: Նախաձեռնությունները կարող են ներառել ինչպես ընկերությունների առկա աշխատուժի վերապատրաստում, այնպես էլ՝ նոր աշխատուժի պատրաստում: Աշխատուժի պատրաստման/վերապատրաստման նախաձեռնությունները կարող են իրականացվել ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Աշխատուժի պատրաստումը/վերապատրաստումը կարող է իրականացվել տեղացի կամ օտարերկրյա մասնագետների կողմից ընկերությունների արտադրություններում, ուսումնական հաստատություններում և այլն: Նախապատվությունը կարող է տրվել ընկերությունների և կրթական հաստատությունների համատեղ ծրագրերին: Արտադրության կազմակերպիչների և որակի վերահսկման մասնագետների վերապատրաստումը կարող է իրականացվել տեղական ընկերությունների գործընկեր ընկերություններում արտապատվիրման պարագայում: Իտալիայում ոլորտի աշխատուժի ուսուցում/վերապատրաստում իրականացնող կրթական հաստատություններից են՝ «Haute Future Fashion Academy», «Istituto marangoni», «Libera Università Carlo Cattaneo», «Accademia Italiana», «Domus Academy» և այլն: 	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p> <p>Ոլորտի ընկերություններ</p>	<p>Բյուջե՝ շուրջ 21.4 մլն ՀՀ դրամ՝ 2014թ.-ին և 42.8 մլն ՀՀ դրամ տարեկան 2015-2016թթ.:</p> <p>Նշում</p> <p>Պետական համաֆինանսավորման ընդհանուր առավելագույն ծավալ՝ տարեկան շուրջ 10.7 մլն ՀՀ դրամ և 21.4 մլն ՀՀ դրամ համապատասխանաբար 2014թ. և 2015-2016թթ. տարեկան:</p>	<p>Աջակցման մեխանիզմի մշակում և հաստատում՝ 2014թ. ապրիլ</p> <p>Աջակցության տրամադրման սկիզբ՝ 2014թ. մայիս</p>	<p>Տարեկան առավելագույնը (կախված պահանջարկից)350 մարդու պատրաստում/վերապատրաստում 2015-2016թթ.՝ (150՝ 2014թ.), որը կազմում է 2013թ. ոլորտի աշխատուժի գնահատված քանակի մոտ 10%-ը:</p> <p>Տեղական ընկերությունների տարեկան մոտ 6 արտադրության կազմակերպիչների և որակի վերահսկման մասնագետների պատրաստում/վերապատրաստում</p> <p>Նշում</p> <p>Արդյունքի նախադրյալ է տեղական ընկերությունների կողմից հայտերի ներկայացումը և ծախսերի համաֆինանսավորումը</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 3.3. Մասնավոր հատվածի և նախնական և միջին մասնագիտական հաստատությունների միջև համագործակցության խթանում

Ակնկալվող արդյունք

Ոլորտում որակյալ նոր աշխատուժի ապահովում և տեղական արտադրողների արտադրողականության աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.3.1. Աշխատանքային խմբի ստեղծում, որը կմշակի արտադրողների և կրթական հաստատությունների միջև համագործակցության ընդլայնմանն ուղղված գործողությունների փաթեթը, մասնավորապես՝</p> <ul style="list-style-type: none"> - Կրթության որակի բարելավում և համապատասխանեցում մասնավոր հատվածի պահանջներին, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտությունների հստակեցում* - Մասնավոր հատվածի ներգրավվածության ապահովում կրթական կառույցներում - Ուսանողների պրակտիկայի կազմակերպում և աշխատանքի տեղավորում - Համագործակցության այլ մեխանիզմների ստեղծում (օրինակ՝ մասնագիտական մրցույթների անցկացում) - Միջազգային առաջատար բուհերի հետ համագործակցությանը և նրանց ներգրավմանը պետական աջակցության ձևաչափի քննարկում <p>Նշումներ</p> <p>*Հիմնված նաև «ՌՆ 3.1. Ոլորտի կրթության կարիքների և աշխատուժի պահանջարկի գնահատում» գործողության շրջանակում նախատեսված ուսումնասիրության արդյունքների վրա:</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Նախնական և միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p> <p>Ոլորտի ընկերություններ</p>	<p>-</p>	<p>Աշխատանքային խմբի ստեղծում - վերջնաժամկետ՝ 2014թ. մարտ</p> <p>Համագործակցության մեխանիզմի մշակում և ներկայացում ոլորտային խորհուրդ - վերջնաժամկետ՝ 2014թ. հունիս</p> <p>Համագործակցություն - շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. սեպտեմբեր</p>	<p>Մասնավոր հատվածի և նախնական և միջին մասնագիտական հաստատությունների միջև համագործակցության մշակված և ներդրված մեխանիզմներ</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 3.4. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կոշիկի արտադրության կրթական ծրագրի ներդրում

Ակնկալվող արդյունք

Վերապատրաստված աշխատուժ, որի արդյունքում կնվազեն արտադրողների նոր աշխատուժի պատրաստման վրա կատարվող ծախսերը

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.4.1. Նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատություններում կոշիկի արտադրության մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի մշակում և ներդրում</p> <ul style="list-style-type: none"> - Կրթական հաստատության ընտրություն - Ծրագրի մշակում - Դասախոսների ներգրավում և վերապատրաստում 	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>Նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատություններ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե՝ 8 մլն ՀՀ դրամ (2014թ.)</p> <p>Նշում</p> <p>Պետական համաֆինանսավորման ընդհանուր առավելագույն ծավալը՝ 4 մլն ՀՀ դրամ</p> <p>Ֆին. աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ (մինչև 50%),</p> <p>Դոնոր կազմակերպություններ (առնվազն 50%)</p>	<p>Վերջնաժամկետ՝ 2014թ. սեպտեմբեր</p>	<p>Կոշիկի արտադրության մասնագիտությամբ կրթական ծրագրի առկայություն</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 3.5. Կոշիկի մոդելավորման համակարգչային դիզայնի մասնագիտական ուսումնական կենտրոնի ստեղծում

Կոշիկի մոդելավորման ժամանակակից գործիքների կիրառմամբ արտադրանքի որակի բարելավում և նոր արտադրանքների մշակման արդյունավետության բարձրացում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>3.5.1 Կոշիկի մոդելավորման համակարգչային դիզայնի մասնագիտական ուսումնական կենտրոնի ստեղծում կրթական հաստատություններից մեկում և մասնագիտական կուրսերի կազմակերպում.</p> <ul style="list-style-type: none"> - Մրցութային կարգով կրթական հաստատության ընտրություն - Ծրագրի հաստատում - Համապատասխան տեխնիկայի և ծրագրային ապահովման փաթեթի գնում - Դասախոսների վերապատրաստում - Ծրագրի մեկնարկ <p>Նշում Ուսումնական կենտրոնը բացի ուսումնական ծրագրից, կարող է նաև վճարովի ծառայություններ մատուցել ընկերություններին:</p>	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Ընտրված կրթական հաստատություն</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե՝ 10 մլն ՀՀ դրամ (2014թ.)</p> <p>Նշում</p> <p>Պետական համաֆինանսավորման ընդհանուր առավելագույն ծավալը՝ 3 մլն ՀՀ դրամ</p> <p>Ֆին. աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ (մինչև 30%),</p> <p>Դոնոր կազմակերպություններ (նվազագույնը 70%)</p>	<p>Կենտրոնի հիմնման վերջնաժամկետ՝ 2014թ. դեկտեմբեր</p>	<p>Համակարգչային մոդելավորման մասնագիտական ուսումնական կենտրոնի առկայություն, որը կապահովի ուսուցում և ծառայություններ ընկերությունների համար</p>

ՌՈՒ 4.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 4.1. Կապիտալ ներդրումային ծրագրերի և շրջանառու միջոցների վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորում

Ոլորտի ներդրումային ծրագրերի իրագործման խթանում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>4.1.1. Ընկերությունների կապիտալ ներդրումային ծրագրերի երկարաժամկետ և շրջանառու միջոցների կարճաժամկետ վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում</p> <ul style="list-style-type: none"> – Հայտերի ընդունում – Հայտերի քննություն – Ֆինանսավորման որոշման կայացում – Ֆինանսավորում <p>Նշում Նախատեսվում է սուբսիդավորել վարկի տոկոսադրույքի մոտ 3%-յին կետը:</p>	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>«ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ</p>	<p>Ֆինանսավորման աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ*</p>	<p>Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. հունվար</p>	<p>Ընկերությունների ֆինանսավորված կապիտալ ներդրումային ծրագրեր և շրջանառու միջոցներ</p>

*2013-2015թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված է 50, 80 և 120 մլն ՀՀ դրամ արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորման գումար 2013, 2014 և 2015թթ. համար համապատասխանաբար (Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակում բոլոր գերակա ոլորտների համար միասին վերցված):

ՌՈՒ 5.

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՐՏԱՊԱՏՎԻՐՄԱՆ
ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 5.1. Շնորհանդեսների կազմակերպում Իտալիայում և Գերմանիայում՝ նոր ընկերությունների ներգրավման նպատակով

Նոր պատվերների և ընկերությունների ներգրավում Հայաստան թիրախ շուկաներից

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>5.1.1. Շնորհանդեսների կազմակերպում թիրախային շուկաներում՝ նոր ընկերությունների ներգրավման նպատակով.</p> <ul style="list-style-type: none"> – Պոտենցիալ ընկերությունների նույնականացում – Արտապատվիրման ներգրավման նպատակային շուկայում նախատեսվող միջոցառումների վերաբերյալ իրազեկման առաջնորդական գործողությունների կազմակերպում և իրականացում – Բարձր մակարդակով գործարար շնորհանդեսների կազմակերպում – Թիրախ ընկերությունների հետ անհատական բանակցությունների վարում Հայաստանում արտապատվիրում իրականացնելու նպատակով <p><i>Նշում</i> Շնորհանդեսների կազմակերպման և արտապատվիրող ընկերությունների ներգրավման շրջանակում կարող է օգտագործվել Մփյուռքի ներուժը:</p>	<p>ԶԶԳ</p> <p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ արտաքին գործերի նախարարություն (ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ)</p>	<p>Բյուջե՝ 7.1 մլն ՀՀ դրամ (2014թ.), 16.1 մլն ՀՀ դրամ (2015թ.)</p> <p>Ֆին. աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>Շնորհանդեսների կազմակերպում՝ 2014-2015թթ.</p> <p>Պարբերականությունը՝ տարեկան մեկ շնորհանդեսի անցկացում նպատակային շուկաներից յուրաքանչյուրում (II և IV եռամսյակ)*</p> <p>*2014թ.-ին միայն մեկ շնորհանդեսի անցկացում (IV եռամսյակ)</p>	<p>Կազմակերպված շնորհանդեսներ</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 5.2. Հայաստանում արտապատվիրման հնարավորություններով հետաքրքրված արտերկրյա ընկերությունների ներգնա այցելությունների կազմակերպում

Ակնկալվող արդյունք

Ոլորտի արտերկրյա ընկերությունների արտապատվերների ներգրավում Հայաստան

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>5.2.1. Հայաստանում արտապատվիրման հնարավորություններով հետաքրքրված արտերկրյա ընկերությունների* այցելությունների կազմակերպում Հայաստան.</p> <p>– Գործարար համաժողովի կազմակերպում, այց տեղական արտադրողների արտադրություններ և առանձին հանդիպումներ տեղական արտադրողների և պետության ներկայացուցիչների հետ</p>	<p>ՋՀԳ</p> <p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>Բյուջե՝</p> <p>12.6 մլն ՀՀ դրամ (2014թ.)</p> <p>17.7 մլն ՀՀ դրամ (2015թ.)</p> <p>Ֆին. աղբյուր՝</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>Միջոցառումների կազմակերպում՝ 2014-2015թթ.</p> <p>Պարբերականությունը՝ տարեկան մեկ միջոցառում (IV եռամսյակ)</p>	<p>Համագործակցության հուշագրեր կնքված եվրոպական առաջատար ընկերությունների հետ</p>

ՌՈՒ 6.

ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 6.1. Ռուսաստանում հայկական արտադրանքի արտահանման աջակցման կառույցի ձևավորում

Ակնկալվող արդյունք

Ռուսական շուկայում Հայաստանի թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>6.1.1. Ռուսական շուկայում հայկական արտադրանքի արտահանման ընկերության հիմնմանն ուղղված աշխատանքների իրականացում.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային խմբի ստեղծում - Ընկերության մոդելի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհրդի քննարկմանը: 	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ԶՀԳ</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>-</p>	<p>Աշխատանքային խմբի ստեղծում - վերջնաժամկետ՝ 2014թ. մարտ</p> <p>Ռուսումնասիրության եզրակացությունների ներկայացում ոլորտային խորհուրդ - վերջնաժամկետ՝ 2014թ. հունիս</p> <p>Մոդելի ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհրդի քննարկմանը 2014թ. Սեպտեմբեր:</p>	<p>Ռուսական շուկայում գործող արտահանման ընկերության մշակված մոդել</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌԼ 6.1. Ռուսաստանում հայկական արտադրանքի արտահանման աջակցման կառույցի ձևավորում

Ռուսական շուկայում Հայաստանի թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>6.1.2. Ռուսական շուկայում հայկական արտադրանքի առաջնորում՝ արտահանման ընկերության կողմից.</p> <ul style="list-style-type: none"> – Ծուկայի ուսումնասիրություն – Բանակցությունների վարում ռուսական պոտենցիալ գնորդների հետ – Արտադրանքի ներմուծում՝ ներառյալ մաքսային ձևակերպման և սերտիֆիկացիայի իրականացում – Արտահանման շուկայում արտադրանքի համապատասխան ծավալով պահեստավորում և մատակարարումների կազմակերպում – Առաջնորման գործողությունների իրականացում, օրինակ՝ <ul style="list-style-type: none"> • Պրեզենտացիաների կազմակերպում • Ցուցահանդեսների մասնակցություն • Հայկական արտադրանքը ներկայացնող ինտերնետային պորտալի գործարկում և առաջնորում՝ օնլայն առևտրի հնարավորությամբ • Ցուցասրահի գործարկում «ВДНХ» տարածքում գործող «Հայկական տաղավարում» (ըստ կարիքի) <p>Նշումներ</p> <ul style="list-style-type: none"> – -Միջոցառման իրականացման նախապայման է 6.1.1 կետով նախատեսված մոդելի հաստատումը և ընկերության հիմնումը: – Կանխատեսվում է, որ Ռուսաստան հայկական արտադրանքի արտահանման շրջանակում կառաջանա շրջանառու կապիտալի ֆինանսավորման կարիք, որի շրջանակում պետությունը արտահանման ընկերությանը կհատկացնի կարճաժամկետ վարկ՝ տոկոսադրույքի սուբսիդավորմամբ: Նախատեսվում է վարկի տոկոսադրույքի շուրջ 8%-ի (տոկոսային կետ) սուբսիդավորում: – Պետության կողմից արտահանման ընկերության հնարավոր գործառույթների համաֆինանսավորման մոտավոր չափ. <ul style="list-style-type: none"> • Պահեստ - 50%՝ 2014թ. և 40%՝ 2015թ. • Մարքեթինգ - 50%՝ 2014թ. և 20%՝ 2015թ. • Ինտերնետային պորտալ – 50%՝ 2014թ. 	<p>Արտահանման ընկերություն</p> <p>ՉԶԳ</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե՝ 133.9 մլն ՀՀ դրամ (2014թ.), 159.4 մլն ՀՀ դրամ (2015թ.)</p> <p>Պետական համաֆինանսավորման առավելագույն ընդհանուր ծավալը՝ 75.1 մլն ՀՀ դրամ (2014թ.), 66.3 մլն ՀՀ դրամ (2015թ.)</p> <p>Նշումներ</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացված բյուջեն և պետական համաֆինանսավորումը ներառում են վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը պետության կողմից, սակայն չեն ներառում պետության կողմից տրամադրված վարկի մայր գումարը: • Տրամադրված վարկի առավելագույն ծավալ՝ 410 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2015թթ.) • Սուբսիդավորված տոկոսադրույք՝ մինչև 32.8 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2015թթ.) 	<p>Սկսած 2015թ. ապրիլից*</p> <p><i>*Ժամկետները ենթակա են հստակեցման. կախված է արտահանման ընկերության ստեղծումից</i></p>	<p>Ռուսական շուկայում Հայաստանի թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների աճ</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 6.2. Թիրախային շուկաներում (մասնավորապես, Ռուսաստանում) ցուցահանդեսներին մասնակցություն

Թիրախային շուկաներում (մասնավորապես, Ռուսաստանում) Հայաստանի տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>6.2.1. Թիրախային շուկաներում (մասնավորապես, Ռուսաստանում) տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի ցուցահանդեսների մասնակցության պետական աջակցություն.</p> <ul style="list-style-type: none"> - Ցուցահանդեսների ընտրություն և մասնակից ընկերությունների նույնականացում - Նախապատրաստում - Ցուցահանդեսի մասնակցության կազմակերպում <p>Նշումներ.</p> <ul style="list-style-type: none"> • Պետական համաֆինանսավորման նախապայման է մասնավոր հատվածի մասնակցությունը համաֆինանսավորմանը: • Ռուսաստանում տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի ցուցահանդեսներից կարելի է մասնակցել հետևյալներից մեկին. «TEXTILLEGPROM»*, «Collection Premiere Moscow», «Fashion Industry», «Premiere Vision», «Messe Düsseldorf Moscow»: <p>*«TEXTILLEGPROM» ցուցահանդեսն անցկացվում է Մոսկվայում՝ տարեկան 2 անգամ: 2014թ.-ին ցուցահանդեսի անցկացման ժամկետներն են՝ փետրվարի 18-21 և սեպտեմբերի 23-26:</p>	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ԶՀԳ</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Արտահանման ընկերություն</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե՝</p> <p>17.7 մլն ՀՀ դրամ (2014թ.),</p> <p>28.5 մլն ՀՀ դրամ (2015թ.),</p> <p>39.3 մլն ՀՀ դրամ (2016թ.)</p> <p>Պետական համաֆինանսավորման առավելագույն ընդհանուր ծավալը՝</p> <p>8.8 մլն ՀՀ դրամ (2014թ.),</p> <p>14.2 մլն ՀՀ դրամ (2015թ.),</p> <p>19.6 մլն ՀՀ դրամ (2016թ.)</p>	<p>Պետական համաֆինանսավորում– շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. Հունվար (ժամկետները ենթակա են հստակեցման)</p>	<p>Տեղական արտադրողների մասնակցություն թիրախային շուկաներում (մասնավորապես, Ռուսաստանում) տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի ցուցահանդեսներին</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 6.2. Թիրախային շուկաներում (մասնավորապես, Ռուսաստանում) ցուցահանդեսներին մասնակցություն

Ակնկալվող արդյունք

Ռուսական շուկայում Հայաստանի կաշվի և կոշիկի արտադրության ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>6.2.2. Թիրախային շուկաներում կաշվի և կոշիկի արտադրության ցուցահանդեսի մասնակցության աջակցություն.</p> <ul style="list-style-type: none"> – Ցուցահանդեսների ընտրություն և մասնակից ընկերությունների նույնականացում – Նախապատրաստում – Ցուցահանդեսի մասնակցության կազմակերպում <p>Նշումներ.</p> <ul style="list-style-type: none"> • Պետական համաֆինանսավորման նախապայման է մասնավոր հատվածի մասնակցությունը համաֆինանսավորմանը: • Ռուսաստանում առաջարկվում է մասնակցել Մոսկվայում անցկացվող «Mosshoes» ցուցահանդեսին: Այն անցկացվում է տարեկան 4 անգամ՝ ամառային և ձմեռային տեսականու ներկայացման համար երկուական անգամ յուրաքանչյուրի համար: • 2014թ.-ին ցուցահանդեսի անցկացման ժամկետներն են՝ մարտի 24-27 և սեպտեմբերի 22-25: 	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ԶԶԳ</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Արտահանման ընկերություն</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե՝</p> <p>17.7 մլն ՀՀ դրամ (2014թ.),</p> <p>28.5 մլն ՀՀ դրամ (2015թ.),</p> <p>39.3 մլն ՀՀ դրամ (2016թ.)</p> <p>Պետական համաֆինանսավորման առավելագույն ընդհանուր ծավալը՝</p> <p>8.8 մլն ՀՀ դրամ (2014թ.),</p> <p>14.2 մլն ՀՀ դրամ (2015թ.),</p> <p>19.6 մլն ՀՀ դրամ (2016թ.)</p>	<p>Պետական համաֆինանսավորում – շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. հունվար(ժամկետները ենթակա են հստակեցման)</p>	<p>Տեղական արտադրողների մասնակցություն Ռուսաստանում տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի ցուցահանդեսներին</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 6.3. Թիրախային շուկաներում հայկական արտադրանքի սերտիֆիկացման ծախսերի համաֆինանսավորում

Ակնկալվող արդյունք

Ռուսական շուկայում Հայաստանի թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>6.3.1. Թիրախային շուկաներում (մասնավորապես՝ Ռուսաստանում) հայկական արտադրանքի սերտիֆիկացման ծախսերի համաֆինանսավորում*.</p> <ul style="list-style-type: none"> – Հայտերի ընդունում – Հայտերի քննարկում և որոշումների կայացում – Համաֆինանսավորում <p><i>*Համաֆինանսավորումը կարող է տրվել նաև ռուսական շուկայում հայկական արտադրանքի արտահանման ընկերությանը՝ իր հետ համագործակցող հայկական արտադրողների արտահանված արտադրանքի սերտիֆիկացման ծախսերի համար:</i></p>	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>Բյուջե՝ 4 մլն ՀՀ դրամ (2014թ.), 10 մլն ՀՀ դրամ (2015թ.)</p> <p>Պետական համաֆինանսավորման առավելագույն ընդհանուր ծավալը՝ 2 մլն ՀՀ դրամ (2014թ.), 5 մլն ՀՀ դրամ (2015թ.)</p>	<p>Պետական համաֆինանսավորում– շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. հունվար (ժամկետները ենթակա են հստակեցման)</p>	<p>Աջակցության մեխանիզմի առկայություն</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 6.4. Թիրախային շուկաների վերաբերյալ մարքեթինգային տեղեկատվության տրամադրում հայկական ընկերություններին

Ռուսական շուկայում Հայաստանի թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքի արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>6.4.1. Թիրախային շուկաների վերաբերյալ մարքեթինգային տեղեկատվության տրամադրում հայկական ընկերություններին*.</p> <p>– Թիրախային շուկաների (մասնավորապես՝ Ռուսաստանի) վերաբերյալ կոնկրետ տեղեկատվության ձեռքբերում Euromonitor-ից՝ հիմնված ոլորտի ընկերությունների կարիքների վրա.</p> <ul style="list-style-type: none"> • շուկայի ծավալներ • շուկայի առանձին հատվածների միտումներ • մրցակցային վերլուծություն • հնարավոր գործընկերներ • նախատեսվող ցուցահանդեսներ • ոլորտային համակարգող մարմիններից տեղեկատվություն • Այլ տեղեկատվություն՝ ըստ պահանջի <p>– Տեղեկատվության տրամադրում տեղական արտադրողներին</p> <p>*Նշումներ</p> <p>Շուկայական վերլուծությունների համար կօգտագործվեն Euromonitor-ի տեղակատվությունը (ՁՀԳ -ի բաժանորդագրության շրջանակում), այլ մասնագիտական կառույցների և ընկերությունների հրապարակումները (օրինակ՝ CBI (www.cbi.nl), Fashion Consulting Group, European Fashion &Textile Export Council, International Textile and Fashion Marketing and Management Consultants):</p> <p>Թիրախային շուկաների վերջնական ցանկը կնույնականացվի ոլորտի ընկերությունների հետ քննարկումների և նրանց նախընտրությունների հիման վրա:</p>	<p>ՁՀԳ</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Տարեկան մինչև 2 մլն ՀՀ դրամ</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. փետրվար (ժամկետները ենթակա են հստակեցման)</p>	<p>Նպատակային շուկաների վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն արտահանողների համար</p>

ՌՈՒ 7.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՐԵՆԴԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 7.1. Հագուստի և կոշիկի առաջատար դիզայներական դպրոցների կրթական ծրագրերի ներդրում Հայաստանում

Հայկական ընկերությունների դիզայնի կարողությունների զարգացում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>7.1.1. Հագուստի և կոշիկի առաջատար դիզայներական դպրոցների կրթական ծրագրերի ներդրում Հայաստանում.</p> <p>Պետական աջակցություն</p> <ul style="list-style-type: none"> - Մրցույթի կազմակերպում - Հայտերի ընդունում և դիտարկում - Համաֆինանսավորման տրամադրում <p>Ծրագրի ներդրում Հայաստանում</p> <ul style="list-style-type: none"> - Արտերկրյա դիզայներական դպրոցի ուսումնական փաթեթի գնում Հայաստանում այն ներդրող տեղական կազմակերպության կողմից - Վերոնշյալ տեղական կազմակերպության մասնագետների վերապատրաստում արտերկրյա դիզայներական դպրոցում - Տեղական կազմակերպության կողմից Հայաստանում արտերկրյա դիզայներական դպրոցի ուսումնական ծրագրի դասընթացների կազմակերպում <p>Նշումներ</p> <ul style="list-style-type: none"> • Համաֆինանսավորման նախապայման է մասնավոր հատվածի կողմից նախաձեռնությունը: • Սույն գործողության շրջանակում դիտարկվող արտերկրյա հնարավոր դպրոցներից են «Milan Fashion Campus», «Nuova Accademia di Belle Arti» (Միլան, Իտալիա) և այլն: • Նախատեսվում է, որ Հայաստանում ներդրված ծրագրի մասնակիցները ուսուցման և վերապատրաստման վերջին փուլը կանցնեն ծրագրի հեղինակ արտերկրյա դպրոցում և կստանան համապատասխան հավաստագիր: 	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p> <p><i>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</i></p>	<p>Բյուջե՝ շուրջ 8.8 մլն ՀՀ դրամ</p> <p>Պետական համաֆինանսավորման ընդհանուր ծավալը՝ առավելագույնը 4.4 մլն ՀՀ դրամ</p> <p>Ֆին. աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ (մինչև 50%), Ուսուցման տեղական կազմակերպիչ և դոնոր կազմակերպություն (առնվազն 70%)</p>	<p>Սկիզբ՝ 2014թ. Հունիս (ժամկետները ենթակա են հստակեցման ըստ ներկայացված հայտերի)</p>	<p>Հայաստանում հագուստի և կոշիկի առաջատար դիզայներական դպրոցների կրթական ծրագիր</p> <p>Նշում</p> <p>Արդյունքի նախադրյալ է Հայաստանում տեղական կազմակերպիչ կողմից հայտի ներկայացումը և ծախսերի համաֆինանսավորումը</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 7.2. Հայաստանում հագուստի և կոշիկի դիզայնի կրթության բարելավման ծրագրի մշակում

Ակնկալվող արդյունք

Դիզայնի կրթության կարողությունների զարգացում Հայաստանում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>7.2.1. Հայաստանում հագուստի և կոշիկի դիզայնի կրթության բարելավման ծրագրի մշակում.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային խմբի ստեղծում, որը կներառի շահառուներ ոլորտի արտադրող ընկերություններից և կրթական հաստատություններից (նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն), ինչպես նաև՝ պետական հատվածից - Հայաստանում հագուստի դիզայնի կրթության բարելավման հնարավորությունների քննարկումներ և ուսումնասիրություն - Պետական մասնակցության հնարավորությունների նույնականացում - Արտադրող ընկերությունների և ոլորտի կրթական հաստատությունների մասնակցության ձևաչափերի հստակեցում - Բարելավման ծրագրի մշակում <p>Նշումներ</p> <p>Ուսումնասիրության շրջանակում հնարավոր է հետևյալ հարցերի արծարծումը.</p> <ul style="list-style-type: none"> • Ուսումնական հաստատություններում հագուստի դիզայնի բաժինների բացման վերահսկումը • Հայաստանում հագուստի դիզայնի կրթության բարելավման շրջանակում մասնագիտական ուղղվածությունները և պահանջները • Բուհերում հետևյալ մասնագիտությունների ներդրման կարիքը՝ <ul style="list-style-type: none"> i. Նորաձևության մարքեթինգ և մենեջմենթ i. Նորաձևության ոճաբանություն ii. Նորաձևության հաղորդակցություն • Նոր ուսումնական ծրագրերի սուբսիդավորումը 	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>Ոլորտի նախնական և միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>Ոլորտի ընկերություններ</p>	<p>-</p> <p>Բարելավման ծրագրի մշակումը և հետագա իրագործումը կարող է ունենալ պետական բյուջեից ֆինանսավորման կարիք. սա ի հայտ կգա ստեղծված աշխատանքային խմբի գործունեության ընթացքում և վերոնշյալ հնարավոր ֆինանսավորման բյուջեն ներառված չէ սույն Գործողությունների ծրագրում:</p>	<p>Աշխատանքային խմբի ստեղծում՝ 2014թ. մարտ</p> <p>Բարելավման ծրագրի մշակում՝ 2014թ. հունիս</p>	<p>Հայաստանում հագուստի և կոշիկի դիզայնի կրթության բարելավման մշակված ծրագիր</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌՆ 7.3. Հայաստանում նորաձևության ցուցադրությունների կազմակերպում և մասնակցություն արտերկրում կազմակերպվող նորաձևության ցուցահանդեսներին

Ակնկալվող արդյունք

Տեղական բրենդային արտադրանքի առաջնորում, նորաձևության ոլորտում երիտասարդ տաղանդների բացահայտում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>7.3.1. Հայաստանում նորաձևության ցուցադրությունների կազմակերպում և մասնակցություն արտերկրում կազմակերպվող նորաձևության ցուցահանդեսներին</p> <p>1. Հայաստանում նորաձևության ցուցադրությունների կազմակերպման պետական աջակցություն (համաֆինանսավորում).</p> <ul style="list-style-type: none"> - Պետական աջակցման մեխանիզմի մշակում - Հնարավոր կազմակերպիչների կողմից հայտերի ընդունում - Ներկայացված առաջարկների քննարկում ոլորտային խորհրդի կողմից - Մեկ ծրագրի ընտրություն և ծախսերի համաֆինանսավորում <ul style="list-style-type: none"> • Պետական համաֆինանսավորման նվազագույն և առավելագույն ծավալների հատկորոշում <p>Հնարավոր կազմակերպիչներ՝ կրթական հաստատություններ, դիզայնի և նորաձևության կենտրոններ, տեղական արտադրողներ և այլն:</p> <p>Նշում</p> <p>Նորաձևության ցուցադրությունների կազմակերպման և միջազգային մասնակիցների ներգրավման շրջանակում կարող է օգտագործվել Սփյուռքի ներուժը:</p> <p>2. Արտերկրում կազմակերպվող նորաձևության ցուցադրություններին մասնակցության պետական աջակցություն (համաֆինանսավորում).</p> <ul style="list-style-type: none"> - Պետական աջակցման մեխանիզմի մշակում - Մասնակցության հայտերի ընդունում - Երկու ծրագրի ընտրություն և ծախսերի համաֆինանսավորում <ul style="list-style-type: none"> • Պետական համաֆինանսավորման նվազագույն և առավելագույն ծավալների հատկորոշում 	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>Կազմակերպիչներ</p> <p>Ոլորտի ուսումնական հաստատություններ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե՝ շուրջ 30 մլն ՀՀ դրամ՝ 2014թ.-ին և 44.3 մլն ՀՀ դրամ տարեկան 2015-2016թթ.:</p> <p>Նշում</p> <p>Պետական համաֆինանսավորման ընդհանուր առավելագույն ծավալ՝ տարեկան շուրջ 12 մլն ՀՀ դրամ և 17.7 մլն ՀՀ դրամ համապատասխանաբար 2014թ. և 2015-2016թթ. տարեկան:</p>	<p>Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. (Ժամկետները և հաճախականությունը ենթակա են հստակեցման)</p>	<p>Հայաստանում կազմակերպված նորաձևության ցուցադրություն</p> <p>Արտերկրում կազմակերպվող նորաձևության ցուցադրություններին տեղական անհատ դիզայներների/ ընկերությունների մասնակցություն</p> <p>Նշում</p> <p>Արդյունքի նախադրյալ է անհատ դիզայներների/ ընկերությունների/ կազմակերպիչների կողմից հայտերի ներկայացումը և ծախսերի համաֆինանսավորումը</p>

ՌՈՒ 8.

ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԽԹԱՆՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 8.1. Տեղական շուկայում պատրաստի արտադրանք ներմուծողների կողմից հնարավոր անբարեխիղճ մրցակցության հասցեագրման մեխանիզմի ստեղծում

Բարելավված մրցակցային պայմաններ ներքին արտադրողների համար և ներմուծման փոխարինման աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>8.1.1. Տեղական շուկայում պատրաստի արտադրանք ներմուծողների կողմից բարեխիղճ մրցակցության ապահովման գործունեության արդյունավետության բարձրացում.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային խմբի ստեղծում* - Քննարկումների անցկացում շահագրգիռ կողմերի հետ - Տեղական շուկայում պատրաստի արտադրանք ներմուծողների կողմից հնարավոր անբարեխիղճ մրցակցության խնդիրների ուսումնասիրություն - Ներքին շուկայի պաշտպանության մասին ՀՀ օրենքի շրջանակում հնարավոր միջոցառումների կիրառման հնարավորությունների ուսումնասիրություն - Եզրակացությունների ներկայացում ոլորտային և արդյունաբերական խորհուրդներ - Համապատասխան օրենսդրական փոփոխության նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն (առկա անհրաժեշտության պարագայում) <p>Նշումներ</p> <p>*Հնարավոր է գործողության համատեղում «ՌՆ 1.1. Հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների վերանայում» գործողության հետ:</p> <p>Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ հնարավոր լուծումները կարող են ներառել ներմուծողների կողմից ապրանքի միայն հաշիվ-ապրանքագրով վաճառքի պահանջի կիրառումը, ներմուծված արտադրանքի սերտիֆիկացման պարտադիր պահանջի կիրառումը և այլն:</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ ԿԱ ՊԵԿ</p> <p>ՀՀ ՏՄՊՊՀ</p> <p>ՋՀԳ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>-</p>	<p>Աշխատանքային խմբի ստեղծում - վերջնաժամկետ՝ 2014թ. փետրվար</p> <p>Ուսումնասիրության եզրակացությունների ներկայացում ոլորտային խորհուրդ - վերջնաժամկետ՝ 2014թ. մայիս</p> <p>Եզրակացությունների ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ – վերջնաժամկետ՝ 2014թ. հունիս</p> <p>Օրենսդրական փոփոխությունների նախագծի փաթեթի ներկայացում ՀՀ կառավարություն (առկա անհրաժեշտության պարագայում) - վերջնաժամկետ՝ 2014թ. սեպտեմբեր</p>	<p>Ոլորտային և արդյունաբերական խորհուրդներ ներկայացված եզրակացություններ տեղական շուկայում պատրաստի արտադրանք ներմուծողների կողմից բարեխիղճ մրցակցության ապահովում</p> <p>ՀՀ կառավարություն օրենսդրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ ներկայացված փաթեթ (առկա անհրաժեշտության պարագայում)</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 8.2. Տեղական արտադրանքի առաջնություն համացանցում

Հայ սպառողների շրջանում տեղական արտադրանքի ճանաչողության և վաճառքների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>8.2.1. Տեղական արտադրանքի առաջնության ինտերնետային պորտալի ստեղծում.</p> <ul style="list-style-type: none"> - Պորտալի նախագծում - Պորտալի գործարկում - Պորտալի պահպանում և զարգացում <p>Նշումներ</p> <ul style="list-style-type: none"> • Ինտերնետային պորտալը կներառի տեքստիլ և տրիկոտաժի և կաշվի, կոշիկի և կաշվե իրերի արտադրության ոլորտի տեղական ընկերություններին: • Կայքը կպարունակի անհրաժեշտ տեղեկատվություն ոլորտի արտադրողների, նրանց տեսականու, հնարավորությունների և կոնտակտային տվյալների վերաբերյալ: • Ըստ անհրաժեշտության կայքը կարող է ունենալ օտարալեզու տարբերակ: 	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ԶՀԳ</p> <p>Ոլորտի ընկերություններ, ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե - պորտալի ստեղծում՝ 2.5 մլն ՀՀ դրամ (2014թ.), պորտալի սպասարկում՝ 1 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2016թթ.)</p> <p>Ֆին. աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>Սպասարկումը և սպասարկման ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միության կողմից:</p>	<p>Պորտալի գործարկում - վերջնաժամկետ՝ 2014թ. սեպտեմբեր</p> <p>Սպասարկում – շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. սեպտեմբեր</p>	<p>Ոլորտի տեղեկատվական և առաջնության գործող ինտերնետային պորտալ Հայաստանում</p>
<p>8.2.2. Խորհրդատվություն տեղական արտադրողներին սոցիալական ցանցերում գովազդի միջոցով տեղական սպառման խթանման հնարավորությունների վերաբերյալ:</p> <ul style="list-style-type: none"> - Սեմինարի կազմակերպում ընկերությունների ներկայացուցիչների համար անհատ խորհրդատուի կամ մասնագիտացված ընկերության կողմից 	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>Բյուջե՝ 0.3 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2015թթ.)</p> <p>Ֆին. աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>Տարին մեկ անգամ (տարվա առաջին կիսամյակ)</p>	<p>Համացանցում առաջնության հնարավորությունների շուրջ վերապատրաստված տեղական արտադրողներ</p>

Ռազմավարական նախաձեռնության անվանում

Ակնկալվող արդյունք

ՌՆ 8.3. Ներքին շուկայում սպառողների շրջանում տեղական արտադրանքի վերաբերյալ իրազեկության բարձրացում

Տեղական արտադրանքի արդյունավետ առաջնություն և իրացման աճ ներքին շուկայում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>8.3.1. Ներքին շուկայում սպառողների շրջանում տեղական արտադրանքի վերաբերյալ իրազեկության բարձրացում.</p> <ul style="list-style-type: none"> – Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվող «Հայլուր ինդեքս» և/կամ «Հրապարակում» հաղորդաշարերի միջոցով տեղական արտադրողների և ոլորտի զարգացումների մասին տեղեկատվության ապահովում 	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն,</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>-</p>	<p>2014-2015թթ. (Ժամկետները և հաճախականությունը ենթակա են հստակեցման)</p>	<p>Հայ սպառողների շրջանում թեթև արդյունաբերության ոլորտի հայկական արտադրանքի վերաբերյալ իրազեկության և վստահության մակարդակի բարձրացում</p>
<p>8.3.2. Սպառողների շրջանում իրազեկվածության և վարկանիշի ձևավորման գովազդային արշավի իրականացում.</p> <ul style="list-style-type: none"> – Գործողությունների ծրագրի մշակում – Գործողությունների իրականացում <ul style="list-style-type: none"> • Մամլո ասուլիսներ և հաղորդագրություններ, տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ներում հոդվածներ և նաև արտերկրում՝ ներկայացնելով ոլորտի տեղական արտադրանքի զարգացումները և արտադրողների ձեռքբերումները, տեղական արտադրության միտումները և այլն – Արդյունքների գնահատում <p>Նշում Սույն գործողության շրջանակում կարող է վարձվել առաջնության մասնագետ կամ որոշ ծրագրերի մշակումը կարող է արտապատվիրվել համապատասխան մասնագիտական կազմակերպությունների:</p>	<p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն, Ոլորտի ընկերություններ</p>	<p>Բյուջե՝ 6 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2015թթ.)</p> <p>Ֆին. աղբյուր՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p>	<p>Շարունակական գործողություն, մեկնարկ՝ 2014թ. (սույն ռազմավարության հաստատում)</p>	<p>Հայ սպառողների շրջանում թեթև արդյունաբերության ոլորտի հայկական արտադրանքի վերաբերյալ իրազեկության և վստահության մակարդակի բարձրացում</p>

ՌՌԻ 9.

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ
ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում

ՌԸ 9.1. Ոլորտում գործածվող հումքի և վերջնական արտադրանքի որակի սերտիֆիկացման լաբորատորիայի հիմնման անհրաժեշտության գնահատում

Ակնկալվող արդյունք

Բարելավված մրցակցային պայմաններ ներքին արտադրողների համար և ներմուծման փոխարինման աճ

Գործողություն	Պատասխանատու/ հրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
<p>9.1.1. Ոլորտում գործածվող հումքի և վերջնական արտադրանքի որակի սերտիֆիկացման լաբորատորիայի հիմնման անհրաժեշտության գնահատում.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային խմբի ստեղծում - Քննարկումների անցկացում շահագրգիռ կողմերի հետ - Ոլորտում գործածվող հումքի և վերջնական արտադրանքի որակի սերտիֆիկացման լաբորատորիայի հիմնման անհրաժեշտության ուսումնասիրություն* - Հիմնման պարագայում անհրաժեշտ քայլերի նույնականացում - Եզրակացությունների ներկայացում ոլորտային խորհուրդ - Եզրակացությունների տրամադրում պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերին (մասնավորապես՝ արտադրող ընկերություններին) - Համապատասխան օրենսդրական և այլ բնույթի փոփոխությունների նախագծերի մշակում (առկա անհրաժեշտության պարագայում) - Փոփոխությունների նախագծի փաթեթի ներկայացում պետական և մասնավոր հատվածի համապատասխան կառույցներ (առկա անհրաժեշտության պարագայում) <p>Նշումներ</p> <p>Նախատեսվում է, որ ուսումնասիրությունը կանդրադառնա այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝</p> <ul style="list-style-type: none"> • հումքի և վերջնական արտադրանքի բաղադրությունը, • հումքի, մշակման նյութերի և վերջնական արտադրանքի հիգիենիկ, զգայական, սանիտարա-քիմիական ցուցանիշները, • լաբորատորիայի հիմնման ֆինանսավորման, սեփականատիրության և շահագործման հնարավոր տարբերակները, • լաբորատորիայի տեխնիկական զինվածության պահանջները • համապատասխան տեխնիկական կանոնակարգերի մշակումը, <p>և այլն:</p>	<p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Արդյունաբերության զարգացման հիմնադրամ</p> <p>ՉՀԳ</p> <p>ՀՀ թեթև արդյունաբերության գործատուների միություն</p>	<p>-</p>	<p>Աշխատանքային խմբի ստեղծում - վերջնաժամկետ՝ 2014թ. մայիս</p> <p>Ուսումնասիրության եզրակացությունների ներկայացում ոլորտային խորհուրդ - վերջնաժամկետ՝ 2014թ. հուլիս</p> <p>Փոփոխությունների նախագծի փաթեթի ներկայացում պետական և մասնավոր հատվածի համապատասխան կառույցներ (առկա անհրաժեշտության պարագայում) - վերջնաժամկետ՝ 2014թ. սեպտեմբեր</p>	<p>Ոլորտային խորհուրդներ ներկայացված եզրակացություններ ոլորտում գործածվող հումքի և վերջնական արտադրանքի որակի սերտիֆիկացման լաբորատորիայի հիմնման անհրաժեշտության վերաբերյալ</p> <p>Պետական և մասնավոր հատվածի համապատասխան կառույցներ փոփոխությունների նախագծի վերաբերյալ ներկայացված փաթեթ (առկա անհրաժեշտության պարագայում)</p>

ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.

2014-2016

ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Բյուջեի ծախսերի բաշխումն ըստ ֆինանսավորման աղբյուրների, հազ. դրամ

<i>Հազ. դրամ</i>	2014	2015	2016	2014-2016
Գործողությունների պլանի բյուջե, ընդամենը	282,990	356,690	168,770	808,450
Պետության ֆինանսավորում	158,150	180,970	80,430	419,550
<i>Մասնաբաժինն ընդամենը բյուջեի մեջ</i>	<i>56%</i>	<i>51%</i>	<i>48%</i>	<i>52%</i>
Այլ ֆինանսավորում	124,840	175,710	88,340	388,890
<i>Մասնաբաժինն ընդամենը բյուջեի մեջ</i>	<i>44%</i>	<i>49%</i>	<i>52%</i>	<i>48%</i>

Նշումներ

- 2013թ.-ին ծախս ենթադրող գործողություններ սույն ռազմավարությամբ նախատեսված չեն:
- Բյուջեի ցուցանիշներն արտացոլում են ծախսերի նախնական գնահատականները և կարող են փոփոխվել գործողությունների բյուջեների ճշգրտման և ֆինանսավորման աղբյուրների հետ բանակցությունների արդյունքում: Ամեն տարվա վերջում ոլորտային խորհուրդը կվերանայի և կհաստատի Գործողությունների ծրագիրը (գործողությունները՝ համապատասխան ժամկետներով և բյուջեով) հաջորդ տարվա համար: Տե՛ս «Ծախսերի բաշխումն ըստ գործողությունների ուղղությունների» աղյուսակը հաջորդիվ՝ ըստ ռազմավարական նախաձեռնությունների մոտարկված ծախսերի համար:

Վարկային միջոցներ

- Սույն ռազմավարության 6.1.2 Գործողության շրջանակներում (Ռուսական շուկայում հայկական արտադրանքի առաջնորդում արտահանման ընկերության կողմից) նախատեսվում է պետության կողմից արտահանման ընկերության վարկավորում՝ սուբսիդավորված տոկոսադրույքով: Տրամադրված վարկի առավելագույն գումարը կկազմի 410 մլն ՀՀ դրամ՝ տարեկան՝ 2014-2015թթ.: Այս գումարները Գործողությունների պլանի վերը ներկայացված բյուջեի ծախսերի մեջ չեն ներառված (ներառված է միայն սուբսիդավորված տոկոսադրույքի ծախսը):
- Սույն ռազմավարության 4.1.1 Գործողության շրջանակներում նախատեսվում է կապիտալ ներդրումային ծրագրերի և շրջանառու միջոցների վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորում: 2013-2015թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված է 50, 80 և 120 մլն ՀՀ դրամ արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորման գումար 2013, 2014 և 2015թթ. համար համապատասխանաբար (Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակում բոլոր գերակա ոլորտների համար միասին վերցված): Վերոնշյալ հնարավոր վարկավորման և սուբսիդավորման գումարները սույն Գործողությունների պլանի վերը ներկայացված բյուջեի ծախսերի մեջ ներառված չեն:

Շախմատի բաշխումն ըստ գործողությունների ուղղությունների, հազ. դրամ

	Հազ. դրամ	2014	2015	2016	2014-2016
ՌՈՒ 1. Հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման խնդիրների հասցեագրում		-	-	-	-
ՌՆ 1.1. Հումքի և արտադրական սարքավորումների ներմուծման պայմանների բարելավում		-	-	-	-
ՌՈՒ 2. Տեղական հումքային բազայի զարգացում		-	-	-	-
ՌՆ 2.1. Կաշվի տեղական հումքային բազայի զարգացում		-	-	-	-
ՌՈՒ 3. Մասնագիտական կրթության բարելավում և աշխատուժի պատրաստում/վերապատրաստում		39,420	42,840	42,840	125,100
ՌՆ 3.1. Ոլորտի կրթության կարիքների և աշխատուժի պահանջարկի գնահատում		-	-	-	-
ՌՆ 3.2. Արտադրական աշխատուժի և արտադրության կազմակերպիչների և որակի վերահսկման մասնագետների պատրաստում/վերապատրաստում		21,420	42,840	42,840	107,100
ՌՆ 3.3. Մասնավոր հատվածի և նախնական և միջին մասնագիտական հաստատությունների միջև համագործակցության խթանում		-	-	-	-
ՌՆ 3.4. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կոշիկի արտադրության կրթական ծրագրի ներդրում		8,000	-	-	8,000
ՌՆ 3.5. Կոշիկի մոդելավորման համակարգչային դիզայնի մասնագիտական ուսումնական կենտրոնի ստեղծում		10,000	-	-	10,000
ՌՈՒ 4. Ֆինանսական աջակցություն		-	-	-	-
ՌՆ 4.1. Կապիտալ ներդրումային ծրագրերի վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորում և շրջանառու միջոցների վարկավորման տոկոսադրույքի սուբսիդավորում		-	-	-	-
ՌՈՒ 5. Օտարերկրյա արտապատվիրման ներգրավում		19,630	33,800	-	53,430
ՌՆ 5.1. Ընդհանուրների կազմակերպում Իտալիայում և Գերմանիայում՝ նոր ընկերությունների ներգրավման նպատակով		7,070	16,110	-	23,180
ՌՆ 5.2. Հայաստանում արտապատվիրման հնարավորություններով հետաքրքրված արտերկրյա ընկերությունների ներգնա այցելությունների կազմակերպում		12,560	17,690	-	30,250
ՌՈՒ 6. Մեփական արտադրանքի արտահանման խթանում		175,300	228,400	80,580	484,280
ՌՆ 6.1. Ռուսաստանում հայկական արտադրանքի արտահանման աջակցման կառույցի ձևավորում		133,920	159,440	-	293,360
ՌՆ 6.2. Թիրախային շուկաներում (մասնավորապես, Ռուսաստանում) ցուցահանդեսներին մասնակցություն		35,360	56,910	78,580	170,850
ՌՆ 6.3. Թիրախային շուկաներում հայկական արտադրանքի սերտիֆիկացման ծախսերի համաֆինանսավորում		4,020	10,050	-	14,070
ՌՆ 6.4. Թիրախային շուկաների վերաբերյալ մարքեթինգային տեղեկատվության տրամադրում հայկական ընկերություններին		2,000	2,000	2,000	6,000
ՌՈՒ 7. Հայկական բրենդերի զարգացում		38,840	44,350	44,350	127,540
ՌՆ 7.1. Հագուստի և կոշիկի առաջատար դիզայներական դպրոցների կրթական ծրագրերի ներդրում Հայաստանում		8,840	-	-	8,840
ՌՆ 7.2. Հայաստանում հագուստի և կոշիկի դիզայնի կրթության բարելավման ծրագրի մշակում		-	-	-	-
ՌՆ 7.3. Հայաստանում նորաձևության ցուցադրությունների կազմակերպում և մասնակցություն արտերկրում կազմակերպվող նորաձևության ցուցահանդեսներին		30,000	44,350	44,350	118,700
ՌՈՒ 8. Ներքին շուկայում տեղական արտադրանքի վաճառքի խթանում		9,800	7,300	1,000	18,100
ՌՆ 8.1. Տեղական շուկայում պատրաստի արտադրանք ներմուծողների կողմից հնարավոր անբարեխիղճ մրցակցության հասցեագրման մեխանիզմի ստեղծում		-	-	-	-
ՌՆ 8.2. Տեղական արտադրանքի առաջնորդում համացանցում		3,800	1,300	1,000	6,100
ՌՆ 8.3. Ներքին շուկայում սպառողների շրջանում տեղական արտադրանքի վերաբերյալ իրազեկության բարձրացում		6,000	6,000	-	12,000
ՌՈՒ 9. Որակի ապահովում և վերահսկում		-	-	-	-
ՌՆ 9.1. Ոլորտում գործածվող հումքի և վերջնական արտադրանքի որակի սերտիֆիկացման լաբորատորիայի հիմնման անհրաժեշտության գնահատում		-	-	-	-
Ընդամենը		282,990	356,690	168,770	808,450